



ԱՐԴՅՈ՞Ք ԴԱՅԱՍՏԱՆԸ ԴԵՏԱՈՒՄ Է
ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԿՈՆԿԵՐԳԵՆՑԻԱՅԻ ՄԻՏՄԱՆԸ:

Կոնվերգենցիայի գաղափարը շատ տարածված է տնտեսական աճի և մրցունակության ուսումնասիրություններում, մասնավորապես աճի նեոդասական մակրոտնտեսական վերլուծություններում: Աղքատ երկրներն ավելի արագ են աճում, քան հարուստները, ինչը բացատրվում է առնվազն երեք հիմնական ելթադրություններով:


Նախ, Սոլոուի տնտեսական աճի մոդելը ցույց է տալիս, որ երկարաժամկետ հատվածում երկրները հակված են հասնելու իրենց կայուն հավասարակշիռ մակարդակին: Հետևաբար, քանի որ աղքատ երկրները համեմատաբար հեռու են իրենց կայուն հավասարակշիռ մակարդակից, ակնկալվում է, որ նրանք ավելի արագ կաճեն՝ հարուստ երկրների մակարդակին հասնելու նպատակով:

Հարուստ երկրներում կապիտալի շահութաբերությունը ավելի ցածր է, այդ իսկ պատճառով կապիտալը հիմնականում հարուստ երկրներից հոսում է դեպի համեմատաբար աղքատ երկրներ՝ նպաստելով այդ երկրների կոնվերգենցիային և հարուստ երկրների հետ տնտեսական աճի ու զարգացման մակարդակների տարբերության կրճատմանը:

Կոնվերգենցիայի տեսությունը հիմնավորող երրորդ գործոնը գիտելիքների և տեխնոլոգիաների ավելի ուշ տարածումն է, որովհետև միշտ չէ, որ երկրներն իրենց աշխատաշուկայում օգտագործում են լավագույն հասանելի տեխնոլոգիաները: Մրցակցությունը, ուսուցման փորձն ու գիտելիքների փոխանակումը, մասնավորապես արտահանելի ոլորտներում, աղքատ երկրներին հնարավորություն են տալիս ավելի արագ աճել և ձգտել իրենց հնարավոր առավելագույն մակարդակին:

Ստորև ներկայացված գծապատկերը ցույց է տալիս, որ մեկ շնչի հաշվով ավելի ցածր ՀՆԱ ունեցող երկրները բազային տարիների ընթացքում ունեն մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի ավելի բարձր տարեկան աճ, քան առաջադեմ և զարգացած տնտեսությունները՝ հաստատելով կոնվերգենցիայի առկայությունը ժամանակի ընթացքում:

Գծապատկեր 1: Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի գնողունակության պարիտետը (հաստատուն 2011, միջազգային դոլար) և 1996-2017թթ.




Աղբյուրը՝ WDI

Աշխատանքի արտադրողականության կոնվերգենցիան ենթադրում է հարուստ երկրների համեմատ արտադրողականության տարբերությունների, զարգացման մակարդակի անհամապատասխանությունների նվազեցում: Պատմականորեն ցածր և միջին եկամուտ ունեցող տնտեսություններն իրենց աշխատանքի արտադրողականության աճի տեմպով գերազանցում են համաշխարհային միջին և բարձր եկամուտ ունեցող տնտեսությունների արտադրողականության աճի տեմպերը: Ցածր և միջին եկամուտ ունեցող երկրները շարունակում են գրանցել արտադրողականության աճի բարձր ցուցանիշներ:

Արտադրողականության կոնվերգենցիայի գաղափարը բազմիցս քննարկվել է տարբեր հետազոտողների կողմից վերջին շրջանում: Միջազգային կազմակերպություններն, ինչպես օրինակ ՏՀԶԿ, ԱՄՅ մշակում են մակրոտնտեսական մոդելներ՝ հիմնված տնտեսությունների կոնվերգենցիայի տեսության վրա:

Ստորև ներկայացված գծապատկերը փաստում է, որ արտադրողականության կոնվերգենցիայի միտումը շարունակվում է նաև 2018թ -ին, և ցածր ու միջին եկամուտ ունեցող երկրները շարունակում են գրանցել արտադրողականության աճի ավելի բարձր ցուցանիշներ, համաշխարհային միջինի և բարձր եկամուտ ունեցող տնտեսությունների համեմատ :

Գծապատկեր 2: ՀՆԱ-ի աճը մեկ աշխատողի հաշվով (հաստատուն 2011, միջազգային դոլար)




Աղբյուրը՝ WDI

2018 թվականից Համաշխարհային բանկը Հայաստանը դասել է բարձր միջին եկամուտ ունեցող տնտեսությունների շարքում: Լինելով միջին եկամուտ ունեցող տնտեսությունների շարքում, Հայաստանը միջինում ունի մեկ անձի հաշվով ՀՆԱ-ի բարձր աճի ցուցանիշ աշխարհի միջինի և բարձր եկամուտ ունեցող երկրների համեմատությամբ: 2008 թ.-ի ֆինանսական ճգնաժամը զգալիորեն հարվածել է Հայաստանի տնտեսությանը, որի արդյունքում մեկ աշխատողի հաշվով ՀՆԱ-ն նվազել է մինչև -12,5%: ճգնաժամից հետո, վերականգնման ժամանակաշրջանում, Հայաստանի տնտեսությունը ցուցաբերել է արդյունավետության տատանողական մակարդակ՝ ունենալով մեկ աշխատողի հաշվով ՀՆԱ-ի միջինում 4.1% աճ 2011-ից 2018թթ ժամանակահատվածի համար՝ չափված հաստատուն 2011թ -ի գնողունակության պարիտետի միջազգային դոլարով: Գրանցված աճը ավելի բարձր է համաշխարհային միջինից և բարձր եկամուտ ունեցող տնտեսություններից, հաստատելով, որ Հայաստանը հետևում է աշխարհում արտադրողականության կոնվերգենցիայի միտմանը:

Աշխատանքի արտադրողականության կոնվերգենցիան նաև լուրջ մարտահրավերներ է ստեղծում տնտեսությունների համար: Աշխատանքի արտադրողականության բարձր աճի տեմպերը պահանջում են ավելի բարձր տնտեսական աճ երկրում գործազրկության, աշխատատեղերի ստեղծման, հետզհետե ավելացող բևեռացման և աղքատության խնդիրների լուծման համար:

Գծապատկեր 3: Աշխատուժի արտադրողականություն, գրաղվածության և ՀՆԱ-ի միջև պատմական կապը



Աղբյուր՝ ՀՀ վիճակագրական կոմիտե, Ի-Վի Քոնսալթինգի վերլուծություն

Տնտեսական աճի պատմական տեմպը, աշխատանքի արտադրողականության աճի բարձր տեմպին զուգահեռ, բավարար չի եղել աշխատատեղերի հավելյալ ապահովելու համար, որն անհրաժեշտ պայման էր առկա գործազրկության մակարդակի նվազման համար: 2011-ից 2017թթ. ՀՆԱ-ի բաղադրյալ միջին տարեկան աճի տեմպը Հայաստանում կազմել է 4.1%, մինչդեռ աշխատանքի արտադրողականության ցուցանիշը նույն ժամանակահատվածում կազմել է 6.8%: Հետևաբար երկրում աշխատատեղերի թիվը 2011 թվականից նվազել է՝ 1.17 միլիոնից հասնելով 1.01 միլիոնի՝ հանգեցնելով Հայաստանում 163,000 աշխատատեղի կրճատման:

Կայուն և ընդգրկուն տնտեսական աճը կհանգեցնի երկրում գործազրկության և աղքատության մակարդակի իջեցմանը, կնվազեցնի տնտեսական և աշխատանքային շուկայի բևեռացումը, ինչպես նաև երկրում եկամուտների անհավասարության մակարդակը:

Միայն աշխատանքի արտադրողականության աճը բավարար չէ առաջատար տնտեսություններին հասնելու և Հայաստանի տնտեսական իրավիճակի բարելավման համար: Որոշ դեպքերում դա կարող է հանգեցնել նույնիսկ ավելի շատ տնտեսական խնդիրների, ինչպիսիք են գործազրկության մակարդակի աճը և աշխատատեղերի կրճատումը:

Վերոնշյալ տնտեսական խնդիրները լուծելու և Հայաստանը զարգացած երկրների աշխատանքային արտադրողականության և տնտեսական մակարդակին հասցնելու նպատակով ՀՆԱ-ի աճի, ինչպես նաև աշխատատեղերի ստեղծման ավելի արագ տեմպեր ու բարձր մակարդակ է անհրաժեշտ թիրախավորել:

Աշխատուժի արտադրողականությունը հաշվարկվում է որպես համախառն ավելացված արժեք՝ մեկ աշխատողի հաշվով:



ԱՐԴՅՈ՞Ք ԲԱՅԱՄՏԱՆԸ ԲԵՏԱՌԻՄ Է ԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԿՈՆՎԵՐԳԵՆՑԻԱՅԻ ՄԻՏՄԱՆԸ: